

ԿԱՍԿԱԴ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՎ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆԸ. ազգային վերելքի անավարտ պատումն ու վերածնունդը

Գրիգոր Խանջյանի (1926-2000) անունը սերտորեն կապված է Կասկադ համալիրի հետ, որն արդեն կարող ենք համարել Երևանի նշանավոր պատմաճարտարապետական հուշարձաններից մեկը: Ուշ խորհրդային այս մոնումենտալ շինությունը վկան ու կրողն է Հայաստանի նորագույն պատմության դրամատիկ շրջադարձերի, որոնք իրենց դրոշմն են դրել նաև արվեստագետի ստեղծագործական կենսագրության վրա. 1960–1970-ականների երևանյան ոսկեդարյա վերելքից՝ 1980–1990-ականների անկումն ու ճգնաժամը և արդեն անկախության շրջանի նոր վերածնունդը 2000-ականներին: 2009 թվականից, ինչպես հայտնի է, Կասկադ համալիրի տարածքում հիմնադրվեց Գաֆէսճեան արվեստի կենտրոնը, որն էլ դարձավ Կասկադի վերածնման ու պահպանման գրավականը:

Երևանցիներից քչերը գիտեին, որ ճերմակաքար Կասկադի պատերը թաքցնում են ազգային վերելքի երկու մոնումենտալ խորհրդանիշները՝ Արտաշես Հովսեփյանի «Սասունցի Դավիթ» հարթաքանդակը և Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբեն», «Վարդանանք», «Հայաստանի Վերածնունդ» եռամաս որմնանկարը: Բայց երևանցիները հիշում են, թե ինչպիսի ավերակի էր վերածվել մայրաքաղաքի խորհրդանիշը դարձած, տակավին անավարտ Կասկադը 1988-ի երկրաշարժով սկսված, Անկախությամբ ազդարարված, Արցախյան պատերազմում տարած հաղթանակով պսակված ճգնաժամի տարիներին: Արտաշես Հովսեփյանի և Գրիգոր Խանջյանի անավարտ կոթողները մնացին «պատանդ» քայքայվող Կասկադի ներսում: Եվ հենց անավարտությունն է պատմական վայրիվերումների խորհրդանիշը և անկախության սերունդներին հղված ուղերձը՝ ամբողջատիրական կայսրության պայմաններում կայացած ազգային վերելքի այդ երկու խորհրդանիշները կյանքի կոչել, հանրության առջև բացել և պահպանել: Հրամայական, որն իր բազմաբովանդակ ու բազմաբնույթ մշակութային գործունեության շրջանակներում Գաֆէսճեան արվեստի կենտրոնն այսօր լավագույնս իրականացնում է:

Ուստի, Գրիգոր Խանջյանի 90-ամյա հոբելյանին նվիրված «Գրիգոր Խանջյան. Պատկերից անդին» ցուցադրությունը Գաֆէսճեան արվեստի կենտրոնում կազմակերպելը խորհրդանշական է:

CASCADE COMPLEX AND GRIGOR KHANJYAN Unfinished Narrative of the National Rise and Its Revival

Grigor Khanjyan's (1926-2000) name is closely associated with the Cascade complex, which is considered one of the prominent historical and architectural monuments of Yerevan. This late Soviet monumental structure is the witness and the bearer of the many dramatic turns of Armenia's modern history. The Golden Age rise of Yerevan in the 1960-1970s, its decline and crisis in the 1980-1990s and the new renaissance of the independence era in the 2000s, all put their imprints on the artist's biography. In 2009, the Cafesjian Center for the Arts (CCA) was established in the Cascade complex, which became a pledge to the revival and preservation of the Cascade.

Few Yerevan residents knew the white-stoned Cascade walls housed two monumental symbols of national pride; the *Sasuntsi Davit* relief by Artashes Hovsepyan and the triptych mural, *Armenian Alphabet, The Battle of Vardanank, The Rebirth of Armenia,* by Grigor Khanjyan. However, Yerevan residents do remember the symbol of the city, the still-unfinished Cascade, was turned into ruins in the years of crisis, beginning with the earthquake of 1988, the proclamation of independence and ending with victory in the Artsakh war. Major unfinished works by Artashes Hovsepyan and Grigor Khanjyan were "hostages" within the deteriorating Cascade. This unfinished state was the symbol of historical ups and downs, sending a message to the next generations of independence still to be accomplished; to preserve and keep open to the public those two symbols of the national rise that took place under conditions of a totalitarian empire. The Cafesjian Center for the Arts performs this imperative in the greatest way as a part of its multi-faceted and multi-cultural activities. Therefore, the exhibition, *Grigor Khanjyan: Beyond Image,* dedicated to Grigor Khanjyan's 90th anniversary at the Cafesjian Center for the Arts is emblematic.

Դ. Թումանյան
ԳԻՔՈՐ

Շապիկի էսքիզ
Հովհաննես Շիրազ, «Սիամանթո և Խջեզարե» պոեմ
1956-ի ռուսերեն հրատարակություն

Cover sketch
Hovhannes Shiraz, poem *Siamanto and Khachezare*
1956 publication in Russian

Նկարազարդումների էսքիզներ
Խաչատուր Աբովյան,
«Վերք Հայաստանի» վեպ
1958-ի հրատարակություն

Illustration sketches
Khachatur Abovian,
novel *Wounds of Armenia*
1958 publication

ПЕТРОС ДУРЯН
1852 · 1872

ВАГАН ТЭКЕЯН
1878 · 1945


СИАМАНТО
1878 · 1915

Շապիկի էսքիզ
«Պիոներ» մանկական ամսագիր

Cover sketch
Pioneer children magazine

1961





Երևանի Հ. Շարամբեյանի անվ.
Ժողովրդական արվեստի
թանգարանի դռան դիզայնի էսքիզ
(հատված)

Sketch for design of a door at
Folk Art Museum
after H. Sharambeyan in Yerevan
(detail)

1978



Նյու Յորքի Սուրբ Վարդան եկեղեցու դռան դիզայնի տարբերակի էսքիզ

Sketch for design version of a door at Saint Vartan Cathedral in New York

1992

Գաֆէսճեան արվեստի կենտրոնի սրահների մուտքի դռները
Գրիգոր Խանջյանի դիզայնով, 1980-ականներ

Doors to the Cafesjian Center for the Arts Galleries
by Grigor Khanjyan's design, 1980s

Գրիգոր Խանջյանի մոնումենտալ որմնանկարը Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «Խանջյան» սրահում.
«Հայոց Այբուբեն», «Վարդանանք», «Հայաստանի վերածնունդը»

Grigor Khanjyan's monumental mural in the Eagle Gallery of the Cafesjian Center for the Arts:
Armenian Alphabet, Vardanank, The Rebirth of Armenia

1992-2000

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1926 Ծնվել է Երևանում:

1945 Ավարտել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը:

1951 Ավարտել է Երևանի գեղարվեստի ինստիտուտը, որտեղ աշակերտել է Արա Բեքարյանին, Բաբկեն Քոլոզյանին, Էդուարդ Իսաբեկյանին
Ուսման տարիներին զուգահեռ աշխատակցել է պարբերական մամուլին
Նկարազարդել է Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմը:
Մասնակցել է Համամիութենական, Հանրապետական և Միջազգային ցուցահանդեսների:

1953 Դարձել է ՍՍՀՄ նկարիչների միության անդամ և ընտրվել է ՀՍՍՀ նկարիչների միության նախագահության անդամ:

1954 Պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:
Նկարազարդել է Հովհ. Թումանյանի «Գիքորը» պատմվածքը:

1956 «Սևանի ափին» նկարի համար պարգևատրվել է 1-ին աստիճանի դիպլոմով (Երևան), իսկ 1957-ին՝ ոսկե մեդալով (Մոսկվա):

1957 «Անահիտ» կտավի համար արժանացել է ոսկե մեդալի Հանրապետական երիտասարդական 1–ին փառատոնում:
Նկարազարդել է Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմը, որի համար Հանրապետական երիտասարդական 1-ին փառատոնում արժանացել է ոսկե մեդալի (Երևան), նաև՝ 3-րդ կարգի մրցանակի և բրոնզե մեդալի Երիտասարդության և ուսանողության 6–րդ փառատոնում (Մոսկվա):

1958 Նկարազարդել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, որի համար արժանացել է ոսկե մեդալի (Բելգիա), ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի արծաթե մեդալի (Մոսկվա), ՍՍՀՄ Կուլտուրայի մինիստրության և պոլիգրաֆ հրատարակության «Տարվա 50 լավագույն գրքի» 1–ին կարգի դիպլոմի, ՍՍՀՄ Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի կոմիտեի արծաթե մեդալի (Մոսկվա, 1961):
Ստեղծագործական ուղևորություն Ալբանիա:
Ավարտել է «Ալբանիա» նկարաշարը (60 աշխատանք): Տիրանայում բացվել է «Ալբանիայով» ցուցահանդեսը (ռուս նկարիչներ Յու. Ռեյների և Ե. Ձայցևի հետ համատեղ), նաև Երևանում, Մոսկվայում (1959), Կենտրոնական Ռուսաստանի մի շարք քաղաքներում (1960):

1960 Ստեղծագործական ուղևորություն Ֆրանսիա:
Ավարտել է «Փարիզ» նկարաշարը (10 թերթ), որը ցուցադրվել է Մոսկվայում:

1961 Ստացել է ՀՍՍՀ վաստակավոր նկարչի կոչում:

1962 Ընտրվել է ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից-անդամ:
Ստեղծագործական ուղևորություն Իտալիա:
Ավարտել է «Իտալական տպավորություններ» նկարաշարը (3 թերթ):

1963 Ստացել է ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում:
Ստեղծագործական ուղևորություն Լեհաստան:

1964 Ստեղծագործական ուղևորություն Իտալիա:
Ավարտել է «ԵՎ հաց, և՝ սեր, և՝ երազանք» կտավը:

1965 Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի նկարազարդումները ցուցադրվել են Նկարչի տանը (Երևան), նաև Դիլիջանում, Լենինականում, Լենինգրադում (1969): Նկարազարդումների համար արժանացել է Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին նվիրված միջազգային գրքի ցուցահանդեսում խրախուսական մրցանակի (Մոսկվա,1967), «ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր մամուլի պետական կոմիտեի 1-ին կարգի դիպլոմի (Մոսկվա,1968), Համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսի 1–ին կարգի դիպլոմի (1968):
Ավարտել է Մ. Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» պատմվածքի նկարազարդումները (4 թերթ):

1966 Ավարտել է «Իտալական տպավորություններ» նկարաշարը (4 թերթ)
Ընտրվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր և ճարտարապետական խորհուրդների անդամ:

1967 Ստացել է ՀՍՍՀ Ժողովրդական նկարչի կոչում:
«Ազգագրական նատյուրմորտ» կտավի համար արժանացել է ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի արծաթե մեդալի (Մոսկվա):

1969 Ավարտել է Գ. Էմինի «Բալլադ ձկնորսի մասին» պոեմի նկարազարդումները, որոնց համար արժանացել է «Մեկ աշխատանք» ցուցահանդեսի գրաֆիկայի մրցանակի (Երևան):
ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիան և ՍՍՀՄ կուլտուրայի նախարարությունը Ռուսաստանի և Ուկրաինայի մի շարք քաղաքներում կազմակերպում են Գ. Խանջյանի, Է. Օկասի և Վ. Ցիգալի ստեղծագործությունների ցուցահանդեսը:
Ստեղծագործական ուղևորություն Բուլղարիա, Իսպանիա:

1970-1984 Ավարտել է «Իսպանիա» նկարաշարը (10 թերթ):
Ձևավորել է «Հայկական եկեղեցիներ» (1970), «Հայկական խաչքարեր» (1973), «Էջմիածնի գանձեր» (1984), «Աղթամար» (1985), «Գանձարան Ալեք և Մարի Մանուկյան» (1984) գրքերը:

1972 Ստեղծագործական ուղևորություն Բուլղարիա և Միջերկրականի շուրջը:
Ավարտել է «Հացը լեռներում» կտավը:

1973 Ավարտել է «Եվ այս մեր օրերում» գրաֆիկական շարքը:
Ստեղծագործական ուղևորություն Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն:
Ընտրվել է ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ:

1974 Ստեղծագործական ուղևորություն Ֆրանսիա, Մեքսիկա:
Մեքսիկայում բացվում է գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես (ռուս նկարիչ Գ. Վերեյսկու հետ համատեղ):
Ավարտել է Ավ. Իսահակյանի «Առակներ»ի ձևավորումը (13 թերթ):
Ավարտել է Գ. Էմինի «Սասունցիների պարը» գրքի նկարազարդումները, որոնց համար արժանացել է «Գրքի արվեստ» համամիութենական մրցանակաբաշխության 1-ին կարգի մրցանակի (Մոսկվա,1976):

1975 Ընտրվել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, նախագահության անդամ:
Ուղևորություն Երուսաղեմ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ:
Ավարտել է «Վերադարձավ» կտավը:
Ավարտել է Ավ. Իսահակյանի «Արևի մոտ» գրքի նկարազարդումները
Ձևավորել է Գ. Լորկայի «Արյունոտ հարսանիք»բեմադրությունը Լենինականի (Գյումրի) Ա. Մռավյանի անվան դրամատիկական թատրոնում:

1976 Ավարտել է մեքսիկական նկարաշարը «Որտեղ ես դու որդի Աստծո» (10 թերթ), նվիրված մեքսիկացի նկարիչ Դ. Սիկեյրոսի (1896-1974) հիշատակին:

1978 Ընտրվել է ՍՍՀՄ Լենինյան և Պետական մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ: